ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Լումայի» օգոստոս և սեպտեմբեր ամիսների համարները մենք ստիպուած եղանք միացնել մի գրքի մէջ հետևեալ պատճառներով.

Ամառս լոյս տեսնել սկսան երկու նոր հայաթերթեր և մեր դրաշարների մեծ մասը հեռացան այդ թերթերի համար գործելու՝ առաւել վարձ ստանալու յուսով. և մենք, տասը տարուայ ընթացքում առաջին անգամ զգացինք դրաշարի պակասութիւնը։ Ցպարանն էլ միւս կողմից կրկնապատկեց տպագրութեան վարձը։ Բացի այս հանգամանքներից, մեզ մշտապէս թուղթ մատակարարող պահեստը՝ դրժել է իւր խոստումը և զրկել է մեզ թղթի մեր սովորական պաշարից, առարկելով թէ գործադուլների պատճառով դժուար է ապրանք ստացուում, ուստի և Խմբագրութիւնս ստիպուած եղաւ թերթիս այս միացեալ համարի կէսը լրացնել ուրիշ՝ քիչ թէ շատ համապատասխան յատկութեան թղթով։

Մենք ամեն ջանք գործ ենք դրել այս անցողական խոչնդոտները վերացնելու և ամսագրիս հրատարակութիւնը իւր նախկին կանոնաւոր դրութեան վերածելու համար։